



# ԲԱԶՄԱՎԵՊ

ՈՅԺԳ. 1864 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՑՈՒԼԻՍ

Ն Ե Տ Ո Դ Ա Բ (Ի ՀԱՅԱ)

Հին աշխարհին հիւսիսային կողմերն՝ որ մինչև հիմայ ցրտութեամբ և երկար մժութեամբ ահարկու են, քանի որ աշխարհազրական գիտութիւնք չեին ընդարձակած՝ Անհանօր աշխարհ կոչուէին. բայց այս անծանօթ աշխարհս՝ մեր նախահարց վառվուն մոտաց ոչ այնքան ահաւոր՝ որքան խորհրդաւոր երեէր. և եթէ բարկ բորէասայ շունչն իրենց այլ երբեմն դպչելով՝ զգացուցեր էր փշած երկրին բնութիւնը, անոնք դեռ անկէց այլ անդին երեակայէին զարմանալի կամ ախորժելի երկիր և ազգ մը՝ գերհիւսիսական, (ինչպէս կոչելի է թերեւս դերհիւսական գրուածն՝ ի գիրս նախնեաց մերոց՝ որ է թարգմանեալ յունականն իրերվորիի՝ Մութութիւն)։ Այս անծանօթ երկրին բնակիչքն սրբազան սեպուէին, միշտ աստուածոց և պաշտա-

մանց նուիրեալք՝ զոհերով, երգերով, պարերով, ծաղկըներով պսակուած. և հաղարաւոր տարի ապրելէն վերջը՝ պսակն՝ ի գլուխնին և քնարն ձեռուընին բարձր հրուանդանէ մը վար գլորէին յանդունդս ծովու։ Այսպիսի զարմանալի եղած (կամ չեղած) ազգի միջէն այլ զարմանալի անձ մը ծանօթ և հրշակուած է՝ ի Յունաց իրրե մեծ իմաստասէր կամ բժիշկ, Արարիս անուամբ. որոյ համար աւանդեցին ոմանք այլ՝ թէ քուրմ էր Ապողոնի և նետի մը վրայ կոթընած կամ հեծած՝ անդադար ման գայր զերկրիս բողորովը։ Այս առապելը՝ ըստ ոմանց արդի բանասիրաց թուինշանակել Աւար ազգը (Աթչ՛քէւ), որ յարմար հայաձայն անուանն՝ աւարող և աւերող էր, և մի յայն հիւսիսային ազգաց՝ որք առանց հաստատ բնակութեան վրանօք տեղէ տեղ փո-

խաղըէին, և զիրար կամ զօտարս քը-  
շէին իրենց հասարակ և սովորական  
դէնքովն՝ որ էր նետ. ըստ այսմ ամենքն  
այլ իրաւամբք կոչին նետողք : — Մեր  
ազգին փառաց և պերճութեան ատեն  
երբ 400 իշխանք և տոհմապետք թա-  
գաւորին հետ բազմէին 'ի հանդիսի, ա-  
նոնց մէկուն տոհմն կամ պայազատու-  
թիւնն այլ նետողք կոչուէր. բայց հա-  
ւանօրէն թուի զիսապետ նետաձիգ զօ-  
րաց (ինչպէս ձիաւորացն այլ Ասպետ՝  
որ և Բագրատունի), քան թէ նետող  
ազգի մը գաղթականք . որն այլ ըլլայ՝  
մեր ազգին Նետողաց դէնքն պաշտպա-  
նական էր և ոչ թշնամական՝ իրբև այս  
հիւսիսային թափառիկ ազգաց :

Ըստ նկարագրութեան հին աշխար-  
հագրաց և պատմչաց, վերոյիշեալ գեր-  
հիւսսականքն՝ բևեռային շրջանակին  
մօտ բնակիչքն երեխն, որոց հարաւային  
եղերքն՝ մինչև 'ի ծանուցեալ կովկա-  
սային՝ և Արեաց, Հնդկաց ու Չինաց  
աշխարհները եղած լայնածաւալ մի-  
ջոցն՝ անուանէին Սարմատիա (յարե-  
մուակողմն) և Սկիւթիա (յարեւելակող-  
մըն) . այս ետքինս էր բնիկ Նետողաց  
ընդարձակ ասպարէզն թափառանաց .  
ուսկից 2000 տարի՝ հին և միջին պատ-  
մութեան ժամանակ՝ ելան զանազան  
ազգեր՝ յարեւմուտք և 'ի հարաւ ասպա-  
ռակելով : Շատ աղէկ սահմանագրէ  
այս աշխարհս մեր հին աշխարհագիրն .  
« Սկիւթիա աշխարհք՝ որ են Ապախ-  
» տարք, այսինքն թուրքաստանք .  
» ըստ հիւսիսայ՝ Անծանօթ երկրաւ (սահ-  
» մանին) . և ըստ մտից՝ Սարմատացւոց  
» աշխարհաւ (մինչև) առ Աթլ գետով .  
» 'ի հարաւոյ՝ Վրկան ծովով և Արեգք  
» և Հնդկան, առ հարաւային բազկաւն  
» Եմաւոն լերինն . . . իսկ ըստ Ելից կու-  
» սէ՝ սահմանի 'ի ձենաց : Եւ ազգք են  
» նորա 44 » (կամ 43) : Հիմակուան  
հմտագոյն բանաղատք այլ յայս կար-  
ծիս են, թէ հին Սկիւթիա է թուրքա-  
ստան աշխարհն, որ և Ազատ թաթարք  
կոչի հիմայ . իսկ Ապախտար՝ հիւսի-  
սային կամ արեւմտեան թարգմանի : Ես  
չեմ ուզեր քեզի հետ, Հայկակ, այս

երկայն և ճղճղած խնդրոց մէջ մտնել .  
այլ միայն գլխաւոր և մեզի ծանօթա-  
գոյն ազգերը յիշել :

Մեր աշխարհագրին 43 կամ 44 ը-  
ստ ազգաց մէջ յանուանէ միայն (ըստ  
զանազան օրինակաց) երրորդ մասին  
չափ յիշէ, որոց մէջ նշանաւորք են  
թուշիւարք, Մազգուրք կամ Մասսա-  
գետացիք, Հոնիք, Սողիք կամ Սագա-  
ստան (Սոկտք կամ Սոկտիանա հեղի-  
նակաց), Հեփիրադք, և այլն . մէկալոնց  
համար մէկ օրինակագիրն, որ անշուշտ  
յետոյ է քան զիորենացին, կ'աւելցր-  
նէ . « Եւ զայլ ազգս ասէ խուժական  
» անուամբ, զորչէ հարկ ասել . զի այժմ  
» այլ ազգ ոչ զիտեմք, բայց միայն  
» զիուշին ազգ՝ որ ճարակի զերկիրն  
» զայն » : Այս յետին ազգս, (զոր  
մեր աշխարհագիրն յիշէ նաև 'ի մէջ  
ասիական Սարմատաց, որ սահմանա-  
կից էին Սկիւթիոյ յարեւմտից), զոր և  
մեր ուրիշ պատմիչք այլ յիշեն, թուի  
իրենցմէ յետնոց յիշեալ Պաշիսիրք  
ազգն թուրքաստանի, որ արդարեւ ըստ  
վկայութեան արաբացի պատմչաց՝ ի-  
րենց տոհմակցաց մէջ ամենէն զօրա-  
ւորք և ահարկուք էին մինչև 'ի ժի դար .  
և համարին մերձաւորք Ունկուր թուր-  
քաց՝ նախահարց Ունդարացւոց, այ-  
սինքն Մաճառաց . արեւմտեայք Պասգա-  
ղիր անուաներ են զասոնք : Թողլով այս  
ամեն ազգաց վրայ հետաքննական դի-  
տելիքն, մէկ երկու բան ըսեմ . և նախ  
այս որ ինչպէս հին ատեն Սկիւթիա ը-  
սելով՝ ամեն հիւսիսային ազգերն իրա-  
րու հետ շփոթէին, այսպէս այլ քրիստո-  
նեայ և արաբացի հեղինակք, մանաւանդ  
արեւմտեայք, թուրք անուամբ շփոթեն  
զանազան ժողովուրդներ նախայիշեալ  
կողմանց . բայց ըստ ստուգագոյն և նոր  
աշխարհագրաց այլ թուրքաստան կ'ի-  
մացուի կասպից ծովէն ինչուան թան-  
կուտ կամ Զինաց արեւմտեան սահմա-  
նը, իրեւ 36 երկայնութեան աստի-  
ճանի միջոց արեւմտոքէն արեւելք, և Հ.  
լայնութեան 36—55 աստիճանաց մէջ .  
որ է ըսել՝ հարաւէն մեր Հայաստան  
աշխարհին հարաւագոյն մասին հաւա-

սար : Բայց այս ընդարձակ երկրին մէջ այլ՝ բնիկ թուրքաստան համարուի անմիջապէս կասպից և Արալ ծովուց միջոցն, և այս ետքինիս մէջ թափող երկու մեծամեծ գետոց լայնասիրու հռվիտքն, որը կոչին հիմայ յարևելեայց ձինուն կամ ջանան և Սինուն . առաջինն որ և հարաւայինն՝ կոչի և Ամուտէրիեա, և ըստ նախնեաց Ոքսոս և ըստ հին Պարսից և մերոցս վել-ռոտ . երկրողն հիւսիսայինն Սիր-տէրէա (Դեղին-ծով), և ըստ նախնեաց Եաքսարտ և յումանց ևս Երասիս, որ բնականապէս աւելի անծանօթ էր նոցա քան զ՛Ռքսոս . մինչդեռ անոնք անմիջապէս ասկէ անդին եղող երկիրն այլ կ'անուանէին Անդր-Ռեսեան Transoxiana, յորմէ և Արաբացիք թարգմանօրէն անուանեցին Մառուերս-ուն-նէնը, Յայնկոյսգետոյն . և եղծմամբ Մավար-էլ-Նահար . որ և յետոյ (՚ի ժԳ դարու) ձին-կիզիսանի որդուց մէկունիշիսանութեան բաժին ըլլալով՝ անոր անուամբ ջեղադայ կոչուեցաւ : Այս ընդարձակ երկիրս՝ յանցիշատակ ժամանսակաց ճեմարան և չուարան է վրանաբնակ քան շինարնակ, խաշնարած և ձիարած ազգաց, բարբարոսաց և աղեղնաւորաց . որոց նախահայրն անծանօթ է, թէպէտ և ըստ հին և նոր հաւանագոյն աւանդութեան ՚ի թորգոմայ սերեալ են : Ոմանք այլ ՚ի Մագովգայ ասեն զասոնք . աւելի անհաւանական (ոմանց ՚ի մերոց պատմչաց ըսածն) թէ ՚ի վամայ ըլլան (թուրք.ք) :

Իրենց տեղ տեղ խոպան և աղբատ, տեղ տեղ դալար և սիզաւէտ անհուն դաշտերու և անապատներու մէջ հազարաւոր տարիներ թափառէին և թափառին այս ժողովուրդքս, հնագոյն ատեններ դէպ ՚ի հարաւ ասպատակելով, Պարսից սահմաններուն վրայ . իսկ ասոնք (որ իրենք զիրենք իրան կոչէին) զբարբարականս այլ թուրիսն կոչէին, և անհաշտ կոխ ունէին՝ իրեւ ընդ որդիս չարին (Ահէրմէնի) : Պարսից շատ դիւցազանց քաջութեան ասպարէզն այս թուրանս եղած է : Ասոնք են արեմտեայ հին հեղինակաց Սկիւթացիքն .

բայց իրենց ծանօթագոյն են՝ ասոնց երկրին հիւսիսակողման ազգերն . որք մէկմէկու ետեւէ զիրար քշելով 1000 տարիէ աւելի միջոց՝ հիւսիսային կողմէն դէպ յարևմուտք և ՚ի հարաւ ասպատակէին . յետոյ սկսան հարաւէն արշաւել : ի մարգարէից յիշեալ գովդայ և Մագովգայ և թորելայ ազգերն այլ ասոնք են, յորոց (ըստ Միխայէլի պատմի) Նարուքողնոսոր և կիւրոս օգնական զօրք վարձէին, զորս և համարձակ թուրք անուանէ պատմիչն . բայց այս անունս անծանօթ է հին օրինակագրաց . և թերեւս յայտնի յիշուած չէ յառաջ քան զ'Զ դար, եթէ ՚ի յետնոց աւելցուած չէ այդ անունն մեր Խորենացւոյն աշխարհագրութեան մէջ :

Իսկ առ հինս և ՚ի պատմութեան ծանօթ եղած Սկիւթացւոց մէջ թերեւս հնագոյնք են Աղանք, որ և մեր ազգային պատմութեան մէջ շատ ծանուցեալ և խնամիք թագաւորաց մերոց Արշակունեաց . որոց ընծայեցին և շնորհագեղ դշխոյներ՝ զԱշխէն և Սաթէն (Սաթինիկ) : — Ասոնց տոհմակից սեպուին Մագուրք Քրիստոսէ վեց դար յետոյ այլ յիշեալք, և ճամաշին հիմայ Եւրոպիոյ հիւսիսային և միջին երևելի ազգաց նախահարք կամ հօրեղբարք, այսինքն Գթաց և Տեսոնաց . որոց առաջին բնակութիւնն էր Ռւրալ գետոյն վերնակողմը, և յետոյ Խըլլըզ ազգի անպատմները . ուսկից Քրիստոսի թուականէն քիչ ետքը յարձակեցան ՚ի կովկաս, և անցան այն լեռները, թափեցան մինչև ՚ի Հայաստան, և դաշնադրութեամբ յետքաց շուեցան . բայց դէպ յարևմուտք տարածուելով հասան մինչև յԱղախու ծովն . և 400 տարւոյ չափ հիմկու Ռուսաց Յայսկոյս-Կովկասեան ըսուած երկիրները գրաւելէն զատ՝ անդադար կ'ասպատակէին ՚ի Վիրս, ՚ի Հայս, և ՚ի սահմանս կայսերաց և Պարթևաց, երբեմն ինքն իրենց շահուն համար երբեմն այլուրիշ ազգաց օգնական, ինչպէս երբեմն և Հայոց ընդդէմ Պարսից : Գունդ

մը կամ տոհմ մը Մազգթաց կովկասէն ասդին մնացին Դարբանտայ հարաւակողմը, և մեր Արշակունեաց հետ այլ խնամեցան, և նաև 'ի Քրիստոս հաւատացին Տրդատայ ատեն . բայց յետ մահու նորա՝ մեր Լուսաւորչին թոռը Գրիգորիսն այլ նահատակեցին, իրենց Սանեսան թագաւորին հրամանաւ: Արևմտեայ Մազգութք Դ գարու մէջ անցան ինչուան 'ի Սպանիա և յԱփրիկէ . վասն զի իրենցմէ զօրաւորք զիրենք քշէին, որ էին Հոնիք . և Երոպիոյ մէջ Ե դարուն վերջերը, Ասիոյ մէջ Զին ետքերը՝ գրեթէ անյիշատակ եղան: Յաջորդ (Ե) գարու մէջ ծածկուի Հոնաց անունն այլ, որ Ե և Զ գարուց մէջ ամենէն տիրողն էին, մանաւանդ իրենց վայրենի գիւցազին՝ Ատտիղասայ ատեն, 'ի կէս Ե գարու . թէպէտ Հոնաց անունն գրեթէ հազար տարի առաջ այլ յիշուի և կարգացուի այլ (ըստ ոմանց) Պերսեպոլեայ բենուարանդակ արձանաց վըրայ, այլ տեղերնին շատ որոշ չէ, կամ շատ կարծելի չէ որ ըլլայ ինչուան Սեաւ ծովուն մօտերը . թէ և յետ ժամանակաց հասան այն կողմերը, մինչև մեր յետին պատմիչք կամ յուշագիրք ԺԴ-թէ գարուց Երկիր Հոնաց անուաննեն զԱրիմն այլ: Հոնաց ցեղից մէջ մէկ գըլխաւորն է Ուգուր կամ Ունիգուր կոչուածըն, Հոնի-անգուր ըստ մեր հին պատմըչաց, յորոց անուանի և մեծազօր հրակայի կամ ըմբչի մը հետ մենամարտեցաւ և յաղթեց Բարիկ՝ հայր Վասակայ ուրացողին . ինչպէս յառաջ քան զնա հսկայն մեր Տրդատ՝ ընդ Գրուիհոնի թագաւորի նոցա (թերևս Գուգուր-Հոն) յերկին Տարօնոյ, ուր հասեր էին արշաւանք և մատնութեամբ: Շատ անգամ Ճորայ (Ճէրպէնտ) պահակէն անցնելուն համար յարձակելու յարևմուտու այն անցքն ըսուեցաւ Հոնաց Գուշուն . զոր և ատեն մը մեր զօրաւոր Արշակունի թագաւորք ղգուշութեամբ ամրացուցեր և պահէին անսոնց գէմ: յետոյ Աղուանից ձեռքն անցաւ, որոց անուամբ այլ կոչի: Ատտիղասայ թագաւորութեան ատեն մեր Ս. Մեսրովկ Աղուա-

նից քարոզելով ինչուան կովկասեան լերանց անդին այլ լսեցուց Քրիստոսի աւետարանը, նաև իր աշակերտաց գործակցութեամբ. որոց ձեռքը հաւատաց 'ի Քրիստոս Հոնաց զօրավարն՝ որ յԱղուանս յարձակեր էր, և յետոյ իր ընտանեամբն և հետեւողք նահատակեցաւ հոն: Երկու դար և աւելի վերջը երր Հոնք տկարացեր և Խաղբաց նախիշխանութեան տակ ընկեր էին, գեռ իրենց հին մայրաքաղաքին մէջ որ կոչէր Վառաչան և է հիմայ Թարքու, 'ի հիւսիւց Դարբանտայ, նատէր թագաւորնին կամ զօրավարնին՝ Ալփի անուամբ, որ և պատուով Լիրուէր կոչէր, յորմէ և Լիրուէրուրենան պատիւ (ինձ անծանօթ): Սա իր Երկրէն (զոր Ախուժագնեան աշխարհ Գովգայ՝ կոչէ ժամանակակից պատմիւ մեր), ասպատակի եւլաւ յԱղուանս, յետոյ հաշտելով թողուց որ եպիսկոպոս մը (Խարայէլ Մեծկունեաց) գայ իր Երկիրը և քարոզէ ըզքիրիստոս (յամի 684). արդէն քսան տարի առաջ Հոնաց թագաւորն խնամացեր էր Աղուանից իշխանապետին հետ: Ասկէ ետև գրեթէ չեն յիշուիր Հոնք . այլ Փոխանակ նոցա խօսքիս ըսկիզբը յիշեալ Արարքն, զոր Թուլքք քշեցին (յամին 551) իրենց Երկրէն յՈւկորիոյ՝ որ է հիմկու Սիպերիոյ Վոկուրաց Երկիրն, ուսկից ելեր էին և Հոնք: Բիւզանդացի պատմիչք ստէպ յիշեն վԱւարս և կ'ըսեն թէ Թուլքք Վարիւն անուանէին զանոնք . արդ մեր աշխարհազիրն այլ վերոյիշեալ Ակիւթացի ազգաց մէջ համրէ զԱյխուն և Վալխուն: Դարձեալ Վկայեն անոնք թէ Աւարք ազգակից և բուն Հոնք են, այլ իրենց Աւար անուն թագաւորէն այսպէս կոչեցան: Կայսերաց Երկիրը մտնելով կամաց կամաց յառաջ եկան մինչեւ 'ի գաւառու Դանուբայ, ու իրենցմէ առաջ հոն հասնող Հոները նուաճեցին . բայց իրենց վրայ այլ հասան Բուրդարլք (Դի Խաղբաց վարեալք) և տիրացան այն կողմերուն ը գարուն և այլ ետքը, ուր և մինչեւ հիմայ մնան իրենց աերունոքն խառնեալ ընդ նուռմ ցեղի,

և երկիրն այլ իրենց անուամբ ամենուն ծանօթ է : Այս զօրաւոր և Սլաւեանց տոհմակից բուշղար ազգն այլ յառաջ քան զամենայն յիշուի մեր Հայոց պատմութեան մէջ, Քրիստոսէ դար մը կամ աւելի առաջ . իրենց հին հայրենիքն այլ ծանօթ է վոլկա գետոյն վերին կողմերը, որ և անոնցմէ առած է այս անունս . (առ հինս իռա կոչի և՝ ի Թուրքաց իթլ) . ուսկից իջան ինչուան անոր բերանը և աւելի վար կովկասայ հիւսիսակողմն . և ասկէց այլ քշուելով իրարմէ՝ գունդ մը կտրեց զերվկաս լեռները և անցաւ յԱյրարատ՝ Բասենոյ կողմերը, իրենց վունի իշխանին առաջնորդութեամբ ՚ի Վոլոնդուր ցեղէ, որոյ անուամբ և բնակած տեղերնին վանանդ կոչեցաւ ՚ի Հայս, մինչև հիմայ :

Հոնաց անհետանալու կամ նուազելու ատեն յերեան եկան կամ նշանաւորեցան Սպիտակ Հոնք բատ Բիւզանդացոց կամ Եցրայիտք (սխալմամբ և Նեփթալիսք), որ են բատ մեզ Հեփաղդ նաև Թետաղդ կամ Թետալացիք . (նոյն թուի և Տաղական կամ Իդաղական թէ չիցեն Տահիք Dahaе) . որք և ուրիշ նշանաւոր անուն մ'այլ ունին առ մերայինս՝ Քուշանք, որ է ըստ Զինաց Քուշէի-շուշանկ . (արդեօք ՚ի Քուշայ համարեալք որպէս Հնդիկք) : Ժամանակին պատմիչք կամ յիշողք՝ Հոնաց տոհմակից և մերձաւոր կարծեցին զառնք. ոմանք Թուրք ցեղ մը, ոմանք Հրոնիկա-Մկիշ. իսկ նորբազմահմուտաշխարհագիր մը՝ Երկար քննութեամբ հաստատէ՝ թէ Զինաց մօտ Դիպէթէն ծագեալ ժողովուրդ մ'էր, և բատ նոցա Եռէդի կամ Եռէդի կամ Ճայդ անուանեալ. այս յայտնի է որ Հեփթաղդ Դիպէթի հիւսիսակողմը բնակէին նախ, որ է Թուրքաստանի հարաւակողմը. ուր՝ մերազգի բայց գաղղիագիր Երևելի արևելագէտ մ'այլ<sup>2</sup> արարացի հին պատմիշներէ կու յիշէ Դակարկապ Թուրք հըզզօր ցեղը, որոյ զիսաւոր քաղաքն էր

Քուշան . և բատ այսամ Դիպէթի և Թուրքաց սահմանախառն երկիր և ազգ մը կ'ըլլան սորբա . որք ՚ի պատմութեան Զինաց ինչուան գ. դար Քրիստոսէ առաջ յիշուին . և միայն դար ու կէս յառաջ դէպ յարեմտակողմն եկած են և տիրած Սոգդիանի և Բակտրիոյ, այն տեղի յոյն թագաւորութիւնը վերցընելով : Այս է մեր պատմչաց յիշածն այլ, թէ Արշակ Թետալաց թագաւորին որդին տիրեց Պարթեաց, և ասոնց Բահլ քաղաքը ըրաւ իրեն աթոռ . մէկ եղբայրը թողով իրենց առաջին աշխարհին մէջ, որ է Թետալիս . միւս եղբայրն այլ (Վաղարշակ) թագաւորեցուց Հայոց : Ասանկ հեռաւոր և անծանօթ կողմերէ ծագած են եղեր մեր քաջածանօթ և գերահրոշակ Արշակունի թագաւորքն, Տրդասպ և Տիգրանք . . . գ-ջ դարուց մէջ պայծառացան կամ Հոչակեցան Քուշանք-Հեփթաղք . բայց անկէ առաջ այլ բաւական նշանաւոր գործեր ըրած պիտի ըլլան, մինչև յ'Գ դարու անոնց պատմութիւնն այլ գրուած և ծանօթ էր Հայոց . Զենոր ժամանակակիցն Ա. Գրիգորի լուսաւորչի կ'ըսէ . «Ընթերցիր ըլլթագաւորութիւն Հեփթաղէնիկայ (կամ »Եւթաղեայ) , հելենացի զրով, և կամ » զիթագաւորութիւն Ճենաց, զոր գտաս» նես յ՛Ռոհայ քաղաքի առ Բարդայ » (կամ Բարդեճան)՝ պատմագրի»: Այս ատեններս՝ կամ քիչ առաջ երբ Սասանեանք նուաճեցին զՊարթես՝ մեր թագաւորն Խոսրով իրեւ տոհմակից թէ անոնց և թէ Քուշանայ՝ ասոնց դեսպան խաւրեց և զրուց ընդդէմ Արտաշրի, բայց Քուշանք անփոյթ եղան . սակայն երբ Սասանեանք յաջողեցան և զօրացան՝ Քուշանք անոնց զիսահար եղան, և յափշտակեցին Պարթեսաց Երկիրը, ուհոն ՚ի Բահլ դրին իրենց գահը, ինչպէս յիշէ Բուզանդ պատմելով Շապհոյ պատերազմը ընդդէմ նոցա, և անոնց ձեռքէն ազատիլն՝ քաջութեամբ Դրաստամատն Հայ իշխանին, (որոյ վարձք

<sup>1</sup> Վիկեն Սէն Մարտէն :

<sup>2</sup> Մուրատճա Տ' Ոհսոն :

1 Եթէ, որպէս Թուի՝ Բարգածանն է սա, ՚ի վերջ կոյս Բ դարու գրած է պատմութիւնս այս :

եղաւ իր տէրը՝ Արշակ կոյր թագաւորը՝ բանտէն հանել և մխիթարել. և ապա անոր հետ կամ անոր վրայ անձնամահ ըլլալ։ Կ'ըսուի ՚ի մերոնց թէ Ս. Մեռովկայ քարողութեամբն հաւատացեալ այլազդեաց մէջ կային Հեփիթաղք այլ, բայց տարակուսական է այս։ Մեր ու կէզրիչ պատմիչը յիշեն անզգամ թաղկերտին պատերազմները ընդ Քուշանց, որոց մէջ գտուեցան մեր քաջնախարարը և Մեծն վարդան այլ. անոր որդւոյն՝ Պերոզի սպանուիլն կոռուի մէջ ՚ի Քուշանաց, յամին 488 : Նոյնպէս ուրիշ պատմիչը այլ՝ Վահրամ Զուպին Պարսից բռնաւորին պատերազմները և Քուշանաց երկու թագաւորները նուաճելը (յամին 580), որ կոչէին Շօդ և Պարիօկ. և ի դարուն սկիզբը մեր թաղմայաղիմ Սմբատ մարզպանին կռուելն և յաղթելն անոնց, մինչև ստիպուեցան խնդրել օգնութիւն ՚ի Խազրաց, և եկան ասոնցմէ 300,000 . բայց Սմբատ դիւրաւ ցրուեց զանոնք, անոնց հսկայ թագաւորին հետ մենամարտելով և ըսպաննելով։ Վերջին թագաւորն Սասանեանց Յազկերտ՝ հալածեալ յԱրաբացւոց ապաւինեցաւ ՚ի Քուշանս, բայց չգտաւ օգնութիւն, և անոնց քով սպանուեցաւ (՚ի Մերվ)։ որք Արաբացւոց այլ գրին նախ. բայց իրենց զօրաւոր զրացիներէն նուաճուելով՝ կամ անոնց հետ խառնուելով՝ անյիշատակ եղան ի դարուն մէջ։ Այս զօրաւոր ազգերն էին Խազիրք և Թուրքք. շատ պատմիչը այս երեք ազգերն այլ իրարու հետ շփոթեն, մանաւանդ զՀեփիթաղս և զԹուրքը. ոմանք հին Հեփիթաղաց այլ Թուրքը ըսեն, և ոմանք ինչուան ԺԱ. դարու հասարակաց Թուրքը կոչածն այլ Հեփիթաղս անուաննեն<sup>1</sup>։ Միխայէլ Ասորի համարձակ կ'ըսէ. « Թետալիս՝ որ Թուրքաս» տան կոչի », և Պարսից Արար աշխարհին սահմանակից դնէ։

Հեփիթաղաց անհետանալէն ինչուան ՚ի յառաջանալն Թուրքաց, որ է ըսել Ե-Ժ. դարուց միջոցն, տիրապետող Ակիւ-

թացիքն եղան Խազիրք, որք և Խազրիկանը կոչին ՚ի մերոցս, ևս և Գիւառորաց ազգ<sup>1</sup>. և շատ հին ատեն՝ ինչուան յԵրողոտեայ յիշին Աքածիրի և ասոր նման կոչմամբ՝ (Քրիստոսէ և գար առաջ) . տոհմակիցք և սահմանակիցք Հոնաց և Աւարաց և երբեմն անոնց հետ համանուն։ Արաբացի հին պատմիչ մը Վրաց տոհմակից կ'ըսէ զանոնք. ուրիշ մը սրբագրելով զնա՝ ոչ Վրացի այլ Հայեն կ'ըսէ Խազիրքն։ Իսկ Վիրք իրենց երկրին վրայ առաջին ասպատակող ազգը Խազիրք կոչեն։ մեր պատմութեան մէջ այլ յիշուին ՚ի սկիզբն Գ. դարու, յորում Վոլկայի վարի կողմերը բնակէին. և ուրիշ տոհմակից հզօր ազգ մ'այլ Բասիլը կամ Բարյիդք. որոց յունարէն կոչումն Վասիլի՛ թագաւորական նշանակէ. և այսպէս կարծի յունացից թարգմանաբար կոչիլ յաշխարհագրութեան խորենացւոյն թագաւորական Սարմատք. Երկրին սովա Խազիրք և Բասիլը միաբանեալ յամի իրը 212 , անցան կովկասու մեծ դռնէն (Ճորայ կամ Դարբանաւայ) և կուր գետէն ատիին այլ վազելով՝ կոխեցին ինչուան Հայոց սահմաները. Վնասէպ Սուրհաապ անուամբ թագաւորի մը առաջնորդութեամբ. իսկ մեր թագաւորն Վաղարշ մեծ պատերազմով վրնտեց զանոնք ինչուան նոյն կովկասայ պահակէն այլ անդին՝ չափազանց վրէժինդրութեամբ. մինչև հալածեալքն իրենց բնիկ սահմաններուն համենելով և նոր օգնական ժողվելով՝ դարձան Հայոց վրայ, զՎաղարշ սպանեցին, զօրքը ցրուեցին։ Խոսրով Ա. որդի և յաջորդ Վաղարշայ նորէն վրանին զօրք հանեց, հօրը վրէժն առաւ. և այն պէս վախ ձգեց այն անվախ ազգաց վրայ՝ որ մինչև ստիպուեցան իրենցմէ հարիւրէն մէկ պատանդ տալ Խոսրովու. որ քաջութեան յաղթանակը հոն յունարէն արձանագրելով քարերու վրայ՝ դարձաւ, և բերած գերին բնակեցուց ՚ի Հայաստան, ուր և Բասլաց ազնուականաց հետ խնամութիւն ըրին

Առաւեղեանք և Ալանք, նոյնպէս գաղթեակք՝ ՚ի Հայս : Խոսրովայ որդւոյ Տըրդատայ ատենն այլ Բասիկք ուրիշ հիւսայնոց միաբանութեամբ յարձակեցան կովկասէն ասդին . բայց քաջայաղթն և երագահասն Տըրդատ ընկաւանոնց վրայ Աղուանից երկրին մէջ, և իր սրով թագաւորնին երկու կաոր ընելով՝ քշեց ասպատակը մինչև յերկիրն Հոնաց . և հօրը պէս անոնցմէ պատանդ և նիզակակից առնելով՝ տարաւ Պարսից վրայ : Անկէ ետև ինչուան ՚ի Զ դար և այլ ետև՝ նոյն Վոլկայի եղեղքը բնակէին, շրջակայ ազգաց և տոհմից տիրելով, մինչև հզօրագոյն և վեհագոյն և իրբն թագաւորաց թագաւոր սեպուէր իրենց գլխաւորն, և կ'ըսուէր թուրքացի կոչմամբ Խաքան, կինն այլ Խարուն : Երկու ազգն այլ գրեթէ համապատիւէին, բայց միայն զի բատ աշխարհագրին մերոյ « Թագաւորն Հիւսիսոյ էր Խա » քանն՝ որ է Ցէր Խազրաց՝ և դշխոյն « Թագուհի՝ կին Խաքանայ՝ ՚ի Բասայ » ազգէն » : Խաքանին հզօրագոյն ցեղն աւելի այլ զօրացաւ և բռնացաւ Բաւլաց վրայ՝ երբ Բուշիս թուրքք՝ զոր նախ յիշեցի, մօտեցան իրենց . այնչափ որ ըստ հին և պատուական աշխարհագրին մերոյ՝ կու ստիպուէին Բասիկք ամրանալ ՚ի Սև կղզին Վոլկայի բերանը՝ « ՚ի Հզօր ազգէն Խազրաց և Բւշաց՝ ճարա » կելոց յելից և ՚ի մոտից, եկելոց անդր « ՚ի ձմերոց » : — Ե դարուն կիսէն ետև (յամի իրը 462)՝ Խազիլք իրենց բնիկ երկրէն (յ՛Ակորիս) քշուելով, այս Վոլկայի վարի կողմերը և ինչուան կովկասու ստորոտը սփոնցան . արևելքի կողմէն այլ ինչուան ՚ի սահմանս թուրքաց . որոց հետ շատ մերձաւորութեամբն՝ ՚ի Բիւզանդացւոց կոչին Արևելեան թուրքք, միանգամայն և առ ՚ի զանազանել յերապա անցնող և բնակող կումնաց և Մաճառաց՝ զորս արևմտեան թուրք կոշեն : Մեր պատմիք այլ ցուցընեն թէ զանազան խան կամ խաքան ունէին նոքա, բայց մեծ Խաքան մը կայր, զոր անոնց կերպէին, անոնց կերպարանաց հաւելով . յետոյ մեծամեծ պաշտօնութիւն խնդրուած այլ հասուցին, մինչև գրեթէ

դէմ Խոսրովու Պարսից թագաւորի . և եկաւ իրեն օգնական Ձերոց խաքանն որ երկրորդ էր թագաւորութեան թագաւորին Հիւսիսոյ », իր Շաթ կամ Զաթ որդւովն : Սա մոտաւ յԱղուանս, և աղաչանօք կաթողիկոսին սոցա (Վիրոյի) արգիլեց ասպատակը . ականատես ընկեր մը Վիրոյի՝ պատմիչն Մովսէս կաղանկատուացի՝ շատ հետաքնին և կարևոր տեղեկութիւններ կու տայաց Խազրաց արգունեաց սովորութեան վրայ, զոր ուրիշ պատմիք քով չես կըրնար գտնել, Հայկակ : Թէպէտ այս անդամ ապահով թողին Խազիլք զԱղուանս, բայց յետոյ դարձեալ զանազան անգամ յարձակեցան և նուաճեցին . մինչև հարկ եղաւ որ է դարուն վերջերը՝ Աղուանք թէ ասոնց հարկատու ըլլան թէ Արաբացւոց : Մահմէտի յանորդքն արևելից մէջ իրենց ամենէն զօրաւոր դիմակաց գտան զխազիրս, և թէպէտ կովկասեան լեռներն իրարմէ զատէին անոնց սահմանները, բայց շատ հեղ կամ մէկն կամ մէկայն կտրելով զպահակը կամ անցնելով ՚ի Դարբանատայ՝ իրարու հետ զարնուեցան, երկու կողմէն շատ արիւնհեղութեամբ և մնասով . որոց երբեմն հազորդ կ'ըլլար մեր աշխարհն այլ՝ ամիրապետաց իշխանութեան տակ ըլլալով, կամ ստիպուելով դէմ կենալու Խազրաց ասպատակին . ինչպէս մեր Գրիգոր Մամիկոննեան խոհեմ և կտրին իշխանապետն այլ անոնց հետ կուուելով՝ ընկաւ պատերազմի մէջ, յամին 685 (16 օգոստ.) : Վերջապէս Արաբացիք կրկին անգամ տիրելով և ամրացնելով զԴարբանտ՝ այն կողմէն արգիլեցին զխազիրս . արևելեան կողմէն այլ ուրիշ հնարքով յանողեցան, այսինքն նուաճելով զթուրքս, և իրենց (մահմէտական) կրօնքին հաւանեցընելով, և իշխանութեան հասցընելով, ոչ միայն այն կողմերը, այլ և ինչուան Խալիֆայից արքունիքը ՚ի Պաղտատ . ուր նախ անոնցմէ գերիներ և ստրուկներ բերէին, անոնց կերպարանաց հաւելով . յետոյ մեծամեծ պաշտօնութիւն այլ հասուցին, մինչև գրեթէ

բոլոր իշխանութիւնն անոնց ձեռքն անցաւ : Այս կերպով Խազիլք՝ որ ինչուան կասպից հիւսիսային և արևելեան ափունքը տարածուելով՝ իրենց անունը տուին այն ծովուն (Խազրաց Տով, ինչպէս կովկասու հիւսիսակողմեան երկրին այլ Խազրաց դաշտ), թ-ժ դարուց մէջ ամիբոփուեցան վոլկայի վարի կողմերը, և առջի վայրենութիւննին թողլով՝ բաւական քաղաքականութեան կարգ և ձեւ առին . այս բանիս մէկ պատճառն էր Բիւզանդեան կայսերաց հետ երբեմն դաշնակցին՝ թշնամնութեամբ ընդ Արաբացիս, թէ և ոմանք այլ Թ դարուն սկիզբները (820) մահմէտական եղան՝ որ Արաբացւոց հաճոյ ըլլան և չնեղին 'ի թուլքաց : Բայց աւելի շատերն, ըստ աւանդութեան, այն կողմերը հին Հրէից գաղթականներէն կամ ուրիշ պատճառաւ՝ հրէական կրօնից հետևեցան . մինչև պատմեն ճանապարհորդք թէ Թ-ժ դարուց մէջ անոնց թագաւորներն Հրեայ էին . և շատ նշանաւոր է առ բանասէրա՝ Ժ դարուն կիսուն մօտ դէպք մը (Եթէ իրաւ է) . Սնտալուսիոյ ('ի Սպանիա) Արաբացի թագաւորի մը Հրեայ պաշտօնեայն (Ուաֆ Խաստայի ) թղթով հարցուց և տեղեկութիւն ուզեց Խազրաց թագաւորէն իրենց կրօնից և ծագման վրայօք . նա

այլ պատասխանեց և խմացուց՝ որ Խազիլք են 'ի Խուզարայ յեօթներորդ որդոյ թորգումայ, որոց առաջինն այլ անուանէ Աղիյոր՝ որ է մեր Հայկն, լին ծանուր, թի, Պուղար, Ճն, Սաւիր (Սարիլք) և այլն . և թէ Վոլկայէն գրեթէ ինչուան Դանուր կու տիրէին . իր նախորդաց մէկն աստուածային յայտնութեամբ ընդուներ էր հրէութիւնը, և ինքն (գրողն) Յովսէփ՝ տասնեւշորորդ հրեայ թագաւորն էր Խազրաց . ուրիշ կարեոր զիտելիք այլ կ'աւանդէ, զոր հոս յիշել աւելորդ սեպեմ, Հայկակ : Բիւզանդիոյ և Ռուսաց պատմութեան մէջ, որոց երկուքն այլ սահմանակցութեամբ գործեր ունեցան ասոնց հետ, ինչուան ժի դարուն առաջին քառորդն յիշուին Խազիլք, և ըստ ոմանց՝ այն ատեն (կամ յամին 1016) Ռուսք բոլորովին նուաճեցին զխազիրս : Ստուգիւ մէկ կողմէն Ռուսք երբեմն նեղեալք 'ի Խազրաց՝ կամաց կամաց զօրացան նաև տիրացան անոնց սահմանաց . մէկայլ կողմէն բուն տիրողք և անյիշատակ ընողք, և Սկիւթացի ազգաց գլխաւորութիւնը առնողք՝ յետ այնքան նախայիշեալ հրզօրունետող և ասպատակող ժողովը դողովը դոց՝ եղան տոհմէք թուրքաց :

Հ. Դ. Մ. ԱԼԵՎԱՆ

Շարունակի

## ՀԻՆ ՔՆԱՐ

Ի Սուրբ Հոգին .

**Աւյսօր պանծալի երգով գոչեմք եւ մեք  
ի ձայն քաղցրութեան նըւագ .**  
**Նախնեացըն մեծաց առաքելոց գընդին**  
Նըմանող լիցուք յորդորական ըղձիւ :  
**Դասուց երկնայնոց հանդիսակից դոլով**  
Վարուք մաքրութեամբ հանդիպեսցուք տօնիս :  
**Բոպէից կազմիչ Հոգին Աստուած այսօր**  
ի ձայն սաստկութեան հողմոյ հրնչեաց յաշխարհս .  
**Ի հրաձեւ տեսակ անուշահոտ բուրմամբ**  
Լըցան արարածք եւ սըրբեցան վարուք :